

ԽԱՐԱԿԱՅԻՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ԱՊՐԻԼ 1912

ԹԻԻ 14

Խմբագրապետ
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնահատ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իճշ պէտք է ընեն զրկումները (խմբ.)

Նագեղի լուսին (բան.)

Աւիստրիի յեղափոխական մեծ շարժումները

Թիյեռ — Ֆռանսագիներուն ժամանումը Մոսկուայի
առջեւ (թարգմ.)

Մեր գաւառներու վերամշակութեան հառեակ ազդակ. ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

Գաւառային Լուրեր

Գ. ԱԹԷՇԵԱՆ

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԹԱԴԷՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՅՈՎՀ. ՄԵՂՄՈՒՆԻ

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ՎԵՐՋԻՆ ԱԶԳ

ՄԵՐ ԲՈՂՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Թերս իր առաջին վեցամսեան լրացնելով Բ.ին կ'սկսի. Տա'ալին կը զտնուլն
այնպիսի անհասներ որ հակառակ մեր յայտարարութիւններուն. մինչեւ 13րդ. թիւը
ստանալէ յետոյ կ'եղնեն բերք եւ կը վերադարձնեն, ասկէ վերջ այդպիսիներուն անուն-
ները առանց բացառութեան պիտի հրատարակենք. Նաեւ «պատժոյ» սիւնակ մը պիտի
բանանք այն բաժանորդներուն ու գործակալներուն, որոնք մինչեւ 13րդ. թիւը ստա-
նալը իրենց բոլոր հաշիւները չեն մաքրեր:

ԱՄԱՍԻԱ

Յապար. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԶՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزناسی مدیریته

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսամյակային հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին. թուրքերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա սարեկան	4 մեհիս	Արսաստանանի սարեկան	3 գր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեգիրնը քաջարձակապէս կանխիկ է: Դրանու ցումներու համար ա-
ռանձին նպաստաւոր սրահներ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ հաւեր:

Լոյս տեսաւ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ Օրաթերթը

ՔԱՂԱՔՂԱՎԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԿԻՍՏԱՆԿԱՆ ՇՈՒՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ Ս. Դ. ՀԵՉԱԿԵԱՆ

ԿՈՒՍՏԱՆԿԱՆ ՇՈՒՆԱԿԱՆ

Պիտի աւխասակցին Հնչակեան 15 է աւելի մտաւորական կարող ոյժեր. որոնք իրենց
հեղինակաւոր արտադրութիւնովը ծանօթ են հրապարակի ներկայ կարեւոր խի՛ստ կա-
րեւոր պակաս մը լրացնելու սահմանուած է: Կը թելադրենք բոլոր ազգայինները որ օգ-
տուին, անոր ունենալիք նոյն ու գիտական բովանդակութեան:

Պայմաններ՝ Պօլսոյ եւ Դաւառներու համար սարեկան 80 դր.

վեցամսեայ 45 »

եռամսեայ 25 »

Հասցէ՝ Վարչութիւն Նոր Աւխարհի»

Կ. Պօլիս Բերա, պեհար փողոց թիւ 20

ԴԱՅԼԱՅԻԿ

Լոյս տեսած է ԴԱՅԼԱՅԻԿ կիսամեայ հանդեսին Ա. հաստը: Կը բաղկանայ 460
էջերէ: Պատկերագործ այս պարբերականին մէջ կը գտնուին հարիւրէ աւելի հին եւ նոր
երգեր՝ մեծամասնութեամբ Զայնագրուած եւ 32-հեղինակ գրագէտներու պատկերներ՝ մա-
հուր եւ խնամով սպաւորուած:

Դալլալիկ կոչուած է գնահատելի ծառայութիւն մը մատուցանել այս տեսակետով:

Նշանակուած է ջնջին գին մը 8 դր.

Դիմել հրատարակչին Տիար Հմ. Արամեանցի Կ. Պօլիս փոստարկ թիւ 125

Մեծամասնակ սպառողներու համար կարեւոր զեղչեր պիտի ըլլան:

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ԱՊՐԻԼ 1912

ԹԻԻ 14

Խմբագրական

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸՆԵՆ ԶՐԿՈՒԱԾՆԵՐԸ

Ընտրական պայքարները գրեթէ վերջացան և առաջիկայ պատգամաւորական ժողովի մէջ իւրաքանչիւր կուսակցութիւններու ունենալիք պատասխանատուութիւններն ու զերերը ճշտուեցան մեծ մասամբ: Ընտրական պայքարութիւններու և ժողովրդային միահեծանութեան գէժ զարնուած հարուածներու նկատմամբ չէ որ պիտի ծանրանամ, քանի որ թէ՛ այս էջերու և թէ՛ այլուր այդ աչք ծակող երևոյթներու մասին չատ գրուեցաւ և արդէն չկայ ոեւէ անհատ, նոյնիսկ ոեւէ ընդդիմադիր, որ այդ մասին ներքին նողկանք մը զգացած չ'ըլլայ և իր ներքին համոզումներուն հակառակ շարժած ստիպողաբար Այլ պիտի ուզեմ ուղղակի խնդրոյ նիւթ ընել թէ, ներկայ երես. ժողովի կազմը ինչ չափով պիտի կրնայ դոհացում տալ: Ա.— Թուրքիայի ներքին գաւառներու բարեկարգութեան գործին. Բ.— Բազկացուցիչ ուղղութիւններու արգարացուցիչ ու բնական պահանջներուն. և Գ.— Զբոհում, ճնշում, բայց երկրին ուղն ու ծուծը ներկայացնող բանուոր դասակարգին վիճակին բարելաւման հանգէպ: Ահա՛ այս երեք կարևոր ու կենսական հարցերու մասին առանձին առանձին անդրադառնալով, ներկայ բարլամէնդին ատոնց հանգէպ ունենալիք մտայնութիւնները պիտի մասնաւորեմ համառօտակի:

Ներկայ բարլամէնդը որոշ է որ միայն մէկ մտայնութիւն պիտի ներ-

կայացնէ. թերեւ քանի մը հողիներու որոշումները պիտի քուէարկէ փոսած մատերու բարձրացումով: Հոն, զօրաւոր ու դիտակից ընդդիմադրութիւն գոյութիւն չպիտի ունենայ, և արդէն առանց ասոր պիտի ըլլայ կուսակցական բռնադատութիւն: Սահմանադրական ժողովի մը համար ընդդիմադիր ուժի մը գոյութիւն անհրաժեշտ պայման մ'էն է: Եւր այս կը բացակայի, միթէ միայն մէկ մտայնութիւն ներկայացնող՝ ներկայ կազմը՝ վերոնշանակեալ երեք հարցերուն պիտի տա՞յ բաւարար գոհացում: — Քննեք:

Ա.— Թուրքիոյ ներկայ քաղաքական հորիզոնը թէ ներքնապէս և թէ արտաքինապէս միազնաւոր է: Որով է որ արտաքին թշնամիներ դիւանագիտական խաղեր կը հիւսեն մեր դժբաղդ երկրին դիմուն: Որքան ատեն որ արտաքին քաղաքականութիւնն իր խաղաղ հանգամանքն չստանայ, ներքին խնդիրները պիտի մնան կնճառ ու խցճալի, որովհետեւ մեր զեկավարներն չունին պահանջուած քաղաքագիտական ու վարչական հմտութիւնն ու կարողութիւնն որ մէկ կողմէն արտաքին խնդիրներով պարապին և միւս կողմէն ներքին վերաշինութեան կենսական հորջով՝ իրք տալով պայման արտաքին կարգ մը քաղաքական կնճիռներու խաղաղացման: Դա իրենց կարողութենէն ու բովանդակութենէն շատ վեր ու շատ հեռի է: Հետևաբար մեր հարցերէն առաջինը՝ քուրքիոյ ներքին գաւառներու բարեկարգութիւնը պիտի մնայ իր նախկին վիճակին մէջ: Կրկին պիտի լայ գուռաւը, պիտի հիւծի նա՝ և քայլ մը ևս պիտի մտնենայ դէպի անգունդ...:

Բ.— Ներկայ տիրող կուսակցութիւնն, իբր Ազգայնական կուսակցութիւն, արդէն իր ծանօթ գեւերու բերնով բեմերէն արտայայտուեցաւ, նոյն խի ընտրական խնդիրներու առթիւ որոշ կերպով՝ երևան եկաւ թէ ինչ է իր ձգտումը դէպի երկրին բազկացուցիչ ազգութիւններն ու անոնց պահանջները: Նա, առանց նշատի առնելու թէ երկրին յառաջխաղացումն ու անոր ներքին ու արտաքին անդորրութիւնն՝ բազկացուցիչ ազգութիւններու հանդէպ յոյս արուած խորականութեան վերացումով միայն կարելի է. կը հետապնդէ ճշման ու ձուլման փնտաւար ու անկարելի քաղաքականութիւն մը: Հետևաբար Իթիհատը որքան ատեն որ հետամուտ ըլլայ իր ներկայ ծրագրին և բարլամէնսն ալ անոր միակ արտայայտիչ հանդիսանայ, նոյնքան ատեն ալ մեր երկրորդ խնդիրը՝ այսինքն բազկացուցիչ ազգութիւններու արդարացի ու բնական պահանջները՝ պիտի մնան անշուժեղի և ազդերն ալ բայեալ: Հողային հարցը պիտի ըլլայ յաւիտենական զորդեան հանգոյցը, աւելորդ են այդ խնդիրը վարչային եղանակով կամ օրինական կերպով լուծուած ատենը օգտակար կ'ըլլայի նման վէճերը, քանի որ լուծելու ոչ տրամադրութիւն և ոչ ալ միտք կայ: Քննիչ յանձնախումբեր ուղարկելու պարագան ընտրական պայքարէն վերջ ստացութեան մասնաւորելիք հարց և կամ ժամանակ մ'էս օրօրումի միջոց մ'էր, Մեր այս

երկրորդ հարցն ալ խզճալի ու ողբալի վիճակին մէջ քննարկ սահմանափակ ըլլալը համոզուելէ յետոյ անցնինք երրորդին:

Գ.— Երկրի մը անտեսական ու քաղաքական գոյութիւնն ու դերն ապահովելը, իր աշխատաւոր ու բանուոր դառակարգն է. սուանց անոր զօրաւոր ու ժիր բազուկին չկայ կեանք ու գոյութեան թիւնն և եթէ այդ բաշտկը աշխատելու ու գործելու համար բաւարար այժ ու անունը չստանայ՝ կ'իյնայ ան և իր հետ կ'իյնան նաեւ շատ մը բաներ: Մեր դեկտեմբերին, եթէ իսկապէս կ'ուզէին երկրին բարեկարգմամբ, աշխատաւորութեան խեղճուկ կեանքին բարելաւումն ու անոնց կարենալ գործելու պայմաններն ապահովող միջոցներու պիտի դիմէին, սակայն դժբաղդաբար իրականութիւնը բոլորովին հակառակը ցոյց տուաւ: Կ'աւարտան գործունէութիւնը, մասնաւորաբար մօտաւոր անցեալի մէջ յայտնուած մտայնութիւնները:

Անշուշտ բոլոր աշխատաւորութեան պայապաններու ցաւ պատճառած է, ճապարակ պէյի Սեւանիկի մէջ ըրած մէկ բանախօսութեան առթիւ, ընկերակարութեան ու բանուորական սեփականութեան հանդէպ արձակած սուր սլաքներն ու դրամատէրներու սեփականութեան կազմելով բանուորներ ճշմուրէ մասին ըրած կոչը:

Մենք, ճապարակ պէյի պատկանած կուսակցութեան, բուրժուազիական կուսակցութիւն մ'ըրթալուն արդէն ծանօթ ըլլալնուս, արդէն տարբեր տրտայայտութիւն մը իրենց սկզբունքներուն հակառակ պիտի ենթադրէիք. հետեւաբար յանկարծակիի գալու ոչինչ կայ, այլ մեր երրորդ հարցին՝ բանուորական վիճակի՞նք ալ ներկայ բարդամէնտի միջոցաւ գտնէ փոքր ի շատէ բարւոք վիճակ չի կրնալ տառնալն ալ ընդունելով՝ կոչ կ'ընենք բոլոր զրկուածներուն, հարստահարուածներուն, ճնշուածներուն, աշխատաւորներուն ու բանուորներուն որ պիտակցին, միանան, կազմակերպուին, շարքերը խառնեն, պայքարին մինչև իւրենց վիճակին բարուղբումն ու օրինական իրաւունքներուն վերստացումը. այս է կեանքի պայմանը . . . :

Գ. ԱՅԷՇԵԱՆ

Ն. Ա. ՉԵԼԻԼՈՒՍԻՆ

Նազելի լուսին, աւա՛, դու ինչո՛ւ
Այս գիշեր այդպէ՛ս վառ ես երեւում,
Մի՛քէ զգացի՛ր քե յոյսեր ունիմ,
Ասղերի չափ շատ յոյսեր իմ սրտում:

Նազելի լուսին, եւ կամ զգացի՛ր
Թէ յոյսը կեանքիս պայծառ է փայլում:
Ինչպէս եմ յոյսը վրձնի, կարճավառ
Երկնիքի անձայր, անհուն կամարում:

Շողա՛ւ ա՛յ լուսին, եկու՛ր, գրեկի՛ր ինձ,
Միասե՛ղ հրճուի՛նք, միասե՛ղ երգե՛նք,
Սիրքս ուրախ է, ես յոյսեր ունիմ,
Եկու՛ր ա՛յ լուսնակ, միասե՛ղ ժպտի՛նք:

Օ՛, երանք մի՞տ էս այսպէս լինել,
Յոյսը չի մարի կեանքիս ծալներում:
Ինչպէս եմ յոյսը, այժմ տեսնում եմ,
Անքի՛ծ, շողավառ՝ երկնիքի ծոցում

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՆ

Պատմական Ա.Շխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Ա.

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՊԻՅԵՒՆ

Քաղաքական յեղափոխութեան առաջին կարմիր վարադուրը կը բանայ Անգլիացի ժողովուրդը։ Ազատութեան առաջին հայրենիքն է Անգլիան, որ ժեղարէն սկսեալ ժողովրդապետական առաջին տարրական սկզբունքները բրդեգրելով՝ հետզհետէ իր կորովի ու հաստատախոս ժողովուրդին առնական նկարագրին շնորհիւ զանոնք բնդլայնած՝ և աշխարհի պատմութեան մէջ սահմանադրական անդրանիկ երկիրը հանդիսացած է։

Յեղափոխութեան բոլոր շարժումներուն մէջ առհասարակ՝ որոշապէս կը տեսնենք թէ՛ ուր որ ճնշում ու զեղծում աւելի մեծ չափով են երևան եկած, հոն զնցում ու պոռթկում անխուսափելի են դարձած. և նմանապէս քաղաքական աշխարհին մէջ՝ ուր որ չար թագաւորի մը բռնապետական յուսի վարչութիւնն է տիրած, հոն միշտ ինչպատ ժողովուրդին՝ շարժում մը կամ յեղափոխութիւն մը պայթած է անպայման, ուրեմն ասկէ շատ Գլուրին է եզրակացնել որ անպիտան բռնակալներ, մոլեռանդ ու միակողմանի երևոյթներ մեծապէս նպաստած են ակամայ՝ ժողովուրդներու գիտակցութեան շուտափոյթ զարթնումներուն, և ահա ասոր համար չէ՞ որ Լիպէր իրազամբ կը յայտարարէ, «Ազատութիւնը անօրէն թագաւորներուն կը պարտինք»։ Անգլիացին իր Յովհաննէս թագաւորին անօրէնութեան կը պարտի սահմանադր-

«Ազատութիւնը անօրէն թագաւորներուն կը պարտինք»։

LIEBER

րական անդրանիկ օգլիմանին Մակա Գառլաի խիզախ հռչակումը (1213-ին)։ Բռնակալ Հէնրի Գ. թագաւորին կը պարտի իր Բարլամենդական անդրանիկ կազմակերպութիւնը եղող Հասարակաց Խորհրդարանը (House of commons.), 1265-ին։ Եւ նոյնպէս «Թագաւորներու աստուածային իրաւանց վարչապետութեան» սիրտին փարող՝ Յակոբոս և Կարոլոս թագաւորներու անտանելի վարչութեան կը պարտինք Անգլիոյ Յեղափոխական փառաւոր շարժումները ժէ դարուն մէջ։ *Ուրեմն ազգեր ու ժողովուրդներ թող երախտապարտ լլլան Գլուցպէս իրենց հայրախնամ թագաւորներուն, նոյնքան և աւելի այն ազգամ բռնապետներուն ուրոնք իրենց ազատագրութիւնը փութացուցած են միշտ։

Երբ մէկ կողմէն Յակոբոս թագաւորը Տէրով օծեալները կը նկատէր երկրի ժառանգական իշխանները, և անոնց իշխանութիւնն ալ անսահման և անքննադատելի, միւս կողմէն Անգլիոյ բարլամենդին անդամներն ու մանաւանդ ժողովուրդին մեծամասնութիւնը՝ թագաւորէն բոլորովին կը տարբերէին կառավարական մեթոտին նկատմամբ իրենց հալեղակէտներով։ Գաղափարներու և հալեղակէտներու այս բնական տարբերու-

*Միքէ Օսմանեան ներկայ սահմանադրութիւնն ալ մեծաւ մասամբ բռնակալ Համիթ անգանեի ու կործանաբար քաղաքականութեան չենք պարտի։

Մ. Յ.

յիւան մէջ ա՛նա՝ բողոքեցան նախասեր-
ները ապագայ քաղաքային պատերազմ-
ներու և յեղափոխական արգիւնաւէտ
շարժումներու :

Յակոբոս Ա. իր արքայական ըշխա-
նութիւնը քմահաճօրէն ու չարաչար կեր-
պով կը գործածէր. իր խօսքը՝ իր օ-
րէնք, և իր պաշտօնական յայտարարու-
թիւնները իր և աստուածային պատգամ-
ներ յոյց կուտար, զանոնք չ'գործադը-
րողները կա՛մ տուգանքի և կա՛մ բան-
տարկութեան դատապարտելով : Երկրէն
ներս կամ դուրս փոխադրուած ավրանք-
ներուն վրայ ըստ հաճոյս տուրքեր կ'ա-
րուէր, այնպէս որ իր դատաւորներէն
չատեր՝ ա՛յ այնքան սուրկացած ըլլալով՝
կը յայտարարէին առանց ամէնալու թէ՝
«Շահատաններ ու նաւանագիտներ
թագաւորին դռներն են, որոնք նա կըր-
նայ բանալ կամ գողել որուն առջև որ
ուզէ» : Ժողովուրդին ու բարլամէնդին
ունեյած պատմական ու աւանդական
առանձնաշնորհումները թագաւորին կող-
մէ բոլորովին կը բռնաբարուէին, զանոնք
նկատե ով անհման բաներ, իր նախահայ-
րերուն կողմէ տրուած շնորհներ որոնք
կրնար նոյն իսկ խաղառ ջնջել, եթէ ի-
րենց վերաբերութիւնը չըջանայեաց ու
յարգալիր չըլլալ իրեն դէմ : Մինչև ան-
գամ բարլամէնդին մէջ կառավարական
գործերու նկատմամբ ազատօրէն վիճա-
բանիլ, կամ զեղծումներու դէմ խօսիլ,
քննադատել՝ յանցանք նկատուելով, յա-
ճախ երեսփոխաններն ալ բանա կ'առաջ-
նորդուէին : Անգամ մը, բարլամէնդին
մէջ երեսփոխանները՝ արգիլած մէկ խն-
դիրէն նկատմամբ վիճաբանելուն հա-
մար, թագաւորը զանոնք լաւ մը կը
յանդիմանէ, և բացէն կ'ուրանայ անոնց
իրաւունքներն ու առանձնաշնորհումնե-
րը, որուն վրայ երեսփոխանները արդար
սրտմտութեամբ լեցուած՝ կը հրատարա-
կեն այն խիզախ յայտարարութիւնը, որ

կը կոչուի «Մեծ բողոքագիր» (The Great
Protestation) : Ասոր մէջ ժողովուրդին
ներկայացուցիչները յանդգնօրէն պաշտ-
պանեցին թէ՝ «Բարլամէնդին ազատու-
թիւններն ու արտօնութիւնները, իրա-
ւունքներն ու իրաւասութիւնները Անգ-
ղիոյ ժողովուրդին վաղեմի ու անվիճելի
իրաւունքն ու ժառանգութիւնն են, թէ՝
թագաւորին, երկրին, Պետութեան ու
եկեղեցիին պաշտպանութեանը վերաբե-
րած կնճռոտ և ստիպողական գործեր՝
բարլամէնդին մէջ խորհրդակցութեան ու
վիճաբանութեան յատուկ նիւթիւր են» :

Երբ թագաւորը կ'իմանալ այս անա-
կնկալ շարժումը, անմէջապէս բերել կու-
տայ ժողովին հրատարակած բողոքագիրը
և զայն իր փոխ ձեռքով պայմանելով, լաւ-
բամէնդն ալ կը լուծէ, և նոյն րոկ ե-
րեսփոխաններն ալ բանտարկել կը ջանայ
Այս ճնշիչ ու բռնակալական սղլութիւն-
ներէն ա՛ն սրոջակի կ'ստանանք Սղու-
արդներու կառավարական մէթոսին մէկ
նմոյշը, և ա՛յ թագաւորին ու ժողովուր-
դին մէջ լլլալիք վերջնական բախմբին
ճամբան հաղթուած կը տեսնենք :

Իրերու այս յուզումնալից վիճակին
մէջ Յակոբոս Ա. կը մեռնի, և իրեն կը
յաջորդէ Կարոլոս Ա. (1625թն) :

Կարոլոս ալ իր հօրը պէս բռնաւորու-
կան խիստ ոգիով սողորուած, անոր
քաղաքաբնորովը միայն անած ըլլալով՝
իրեն յանկերգ ընարած էր Ս. Պրքի սա-
խօսքերը. «Ուր որ կայ թագաւորի մը
խօսքը, հոն կայ նաեւ զօրութիւն, և ո՛վ
կրնայ անոր բռնել, չ'նշ կրնես» : Հետե-
ւաւոր, չատ բնական էր որ թագաւորն
ու բարլամէնդին միջև եղած նախկին
պայքարը նորոգուէր : Իր չըջանի առա-
ջին երկու բարլամէնդները կը լուծէ
Կարոլոս, որովհետև անոնք փոխանակ
հառոյթի աղբիւրներու և ելիմտական
խնդիրներու մասին մտածելու, փոխա-
նակ իրեն իրաւասութեան սահմանները

ընդլայնելու, ընդհակառակը ժողովուրդին այդ արժեքած ներկայացուցիչները կը խորհրդակցէին ու որոշումներ կը քուէարկէին զիրենք ընտրուներու ցաւերուն, տառապանքներուն ու ասոնց դարմանումին նկատմամբ, ինչպէս նաև միւս կողմէն իրենց սահմանադրական արդար իրաւունքներուն կառջաց՝ կը ջանային զանոնք ա՛լ աւելի լայնցնել, և պետութիւնը ժողովրդային հիմերու և սկզբունքներու վրայ հաստատել:

Կարողոս տեսաւ որ դանձր պէտք էւզած զբամը չիկար իր մարեանդական ու բռնաւորական դիտաւորութիւններուն գործածելու համար. պէտք էր դրամ հաւաքել, և առ իր երկրորդ բարլամէնդը ցրուելէն անմիջապէս ետք, չախատեցաւ Benevolence* կոչուած մասնաւոր հարկատուներով ու բռնի փոխառութիւններով դրամ հաւաքել կառավարութեան ղէկը յառաջ վարելու համար: Բայց իր բոլոր ջանքերը ապարդիւն ելլելով՝ ստիպուեցաւ՝ դարձեալ բարլամէնդին ռօմանդակութեանը դիմել: Այս անգամ բարլամէնդի երկու ժողովներն ալ (կորտերու ժողով, և հասարակաց ժողով) կը գումարուին, որոնց մէջ կը գտնուէր նաև Գրամվել՝ իր քաղաքին՝ Հինդլինդրնի կողմէ ընտրուած ըլլալով (1628թ): Երեսփոխոնները բոլորն ալ թագաւորին կը խօստանան դրամական լաւագոյն աղբիւրներ հայթայթել, պայմանաւ որ նախ ինքը վաւերացնէ իրենց պատրաստած Իւաւանց Հանրագրութիւնը (Petition of Right) որ Մակնա Գարթայէն վերջ՝ Անգղիոյ սահմանադրական գաւառութեան մէջ ամենահարկւոր ստորումներ կը կազմէ: Այս հանրագրութեամբ ժողովորդին ներկա-

* Benevolenceները 15րդ դարուն Դիւտորեան տոպիկ բազաւորին՝ Հէնրի Է-ի կողմէ նախատեսուած տուրքեր էին, որոնք իբր նուէր նարուստներէն կը գանձուէին բարոյական ազդեցութեամբ:

Մ. Յ.

յացուցիչները բողոքած էին չորս զեղծումներու դէմ. 1) Առանց բարլամէնդին հաւանութեան թագաւորը իրաւունք չունի և չպիտի կրնայ դրամ հաւաքել փոխառութիւններով, հարկատուներով և այլ ապօրինի տուրքերով. 2) Առանց պատճառը ցոյց տալու բանաւարկութիւն չպիտի ըլլայ. 3) Զինուորներ անհատական չէնքերու մէջ պահելու խիստ անպատեհ բան մը ըլլալով, պէտք է հեռացուին ուրիշ տեղեր. 4) Դատաւարութիւնը պէտք է ըլլայ զինուորական օրէնքի (Martial law) համաձայն, այսինքն, առանց երդմնաժողովի (jury):

Կարողոս չափազանց դժկամակեցաւ հաւանիլ այս բողոքագրին ճիշտ ինչպէս Յովհաննէս թագաւոր ալ դժկամակած էր վաւերացնել Մակնա Գարթան. բայց ի վերջոյ հարկադրուեցաւ վաւերացնել զայն ըստ ընկալեալ սովորութեան: Սակայն չուտով հասկցուեցաւ Կարալոսի բացարձակ կեղծաւորութիւնն ու նենգամտութիւնը. հետեւեալ տարին՝ 1629ին լուծեց բարլամէնդը, և իր յանձնառու եղած օրէնքներուն հակառակ՝ սկսաւ բռնի դրամ հաւաքել արգիլուած տուրքերով ու փոխառութիւններով: Առանց բարլամէնդի 11 տարի կառավարեց Անգղիոյ ժողովուրդը, անխղճաբար այն տոննի Սպանիոյ կամ Յիսուսայի նման բացարձակ ու անպատասխանատու միապետութեան վերածելով Անգղիացիներուն սահմանադրական կառավարութիւնը:

Թագաւորին իշխանութեանը ուժ տրուող, ժողովուրդին վաղեմի ազատութեան բեկորներուն վրայ կամայականութիւններու երկար շարքեր յորինող վատեր ու ստրուկ գործիքներ չէին պակսեր սակայն, ինչպէս դեռ մինչև այսօր մեր մէջ ալ չեն պակսիր հին բռնապետական ուժի միջոցով կողմնակից ցածոգի պաշտօնեաներ, որոնք ինչպէս ասկէ առաջ, նոյնպէս և այն ատեն մեծամեծ դիրքերու և

համբաւներու մէջ կը յղփանային, Այսպէս, կառավարութեան բաղարձակ ու հարստահարչ հանգամանքը քաղաքական ու կրօնական խնդիրներու մէջ, պաշտականներու և պաշտօնականներու ցոյց տուած կատարեալ անտարբերութիւնն ու անողորմութիւնը զրկեալներու և հարստահարեալներու միջև:

տահարեալներու հանդէպ, պատճառ եւ զան հազարաւորներու Ամերիկա գաղթելուն, հոն գտնելու, որոնելու համար այն ազատութիւնն ու ապահովութիւնը, որոնք կը զլացուէին շարունակ մայր հայրենիքին: Անոց զիտյ մէջ:

ԹԱԴԵՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

Թ Ի Յ Ե Ռ

ՄԱՐՍԻԼԱ ԾՆԱԾ Է 1797 ԻՆ ԵՒ ՄԵՐԱԾ Է 1877 ԻՆ

Այս պատմագիր ու պետական մարդը Լուի — Ֆիլիպի իշխանութեան նախարարը եղաւ: Իզուր չանոց արգիլել 1870 ի ձախտամարտը: Մասնակցելով 1871 ի խորագործութեան յաջողեցաւ Պիլիպը Թրանսայի վերապահել ի վերջոյ, երկրին մատուցած իր այնքան ծառայութիւններէն վերջ, հանրապետութեան նախարարը եղաւ:

Գրած է « Պատմութիւն Թրանսական Յեղիտիտութեան », ինչպէս նաեւ « Պատմութիւն Հիպատոսներու և կայսրութիւններու » անուն երկու գրքեր, որոնք իրենց յստակութեանը համար կը յարգուին ամեն տեղ:

ՔՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԴԱՄԱՆՈՒՄԸ ՄՕՍԿՈՒԱՅԻ ԱՌՁԵԻ

Փրանսական բանակը արագ քայլով մը կը յաւաքանար դէպք այն բարձունքը, ուրիշ կը յաւար վերջապէս նշմարել մեծ քաղաքը՝ Մոսկուան: Ռուսներուն կողմը ելլէ ամեն ինչ քարուքանդ եղած էին, Փրանսացիներուն կողմնալ, սակայն, ուրախութիւն, հարստութիւն և փայլուն պատրանքներ էին: Յոգնութիւնն ընկճուած մեր բանակը իր հետ կը տանէր քայելու անկարող շատ մը վիրաւոր զինւորներ, որոնք Մոսկուայի մատենապալատէն իրենց երախտեղծութիւն մը նուազած կը տեսնէին կարծես: Այս շորքերուն մէջ կար քանակութիւն մը զինւորներու և սպաներու, որոնք արշաւած ըլ-

լալով դէպք եջիպատական բուրգերը, Յարգանքներ կը կերպը, Հաւով, Միլան, Մատրիա, Վիեննա և Պէտրին՝ իրենց յաղութն զողողային խորհելով ի՞նչ արեւելքի ամենէն զօրաւոր մայրաքաղաքներէն Մոսկուան ալ այցելել կ'երթային: Անաւարտիցս այս քաղաքին մէջ հանգստութեան, ճոխութիւն և հաւանարար խաղաղութիւն գրտնելու յոյսն էր որ իրենց գոհունակութիւն կատարէր: Հոն մտնելու խորհուրդը խախտած էր այս զինւորներուն երեւակայութիւնը: Եւրոպական բոլոր մայրաքաղաքները արշաւած էին ասոնք, բացի Լոնտոնէ, որ պաշտպանուած էր ծովերով: Նաբոլէօն առաւօտուն կանաւի հեծնելով իր

ձին՝ կանգնած էր զինւորներուն մէջտեղ, որոնք՝ ի տես եւ ի մերձեցումն Մօսկուայի՝ մոռցած օրուան իրենց բոլոր զբաղումներէն՝ ծափեր կը գործէին թէ անոր եւ թէ իրենց փառքը յաւել ժողովուհամար:

Վերջապէս, բլուրի մը կատարը հասնելով՝ բանակը անմիջապէս պահուեցաւ անհուն քաղաքին բաւական մօտիկ հեռաւորութեամբ մը: Սա կը փայտեր հազարաւոր գոյներով եւ բարձրացած լուսաշողջող գոյններով ունէր: Եզական փայտերու, լիններու, հիւղակներու, պալատներու, եկեղեցիներու, պանդակատուններու խառնուրդով, բիւզանդական եւ գօթական ոճով կառուցուած երկիրներ, որ արդարացաւ է այն ինչ որ արեւելեան պատմութիւնները կը խօսին Ասիոյ հրաշալիքներուն նկատմամբ: Կոնստանդնուպոլսի մօտքերը այս մեծ քաղաքին նկարը կը կազմէին: Կեդրոնէն կը բարձրանար միջաբերդի ձեւով բարձրամիտքի մը, այսինքն տեսակ մը կապիտալ, ուր միանգամայն կը նշմարուէին թէ աստուածային տաճարներ եւ թէ կայսերական պալատներ: Ասիոյ զծագրուած պատերուն վրայ կ'երեւային վեհաշուք կամարներ՝ կրելով տն իւր շրջաններ, որ Ասիոյ բոլորակ պատմութիւնն աւ փառասիրութիւնը կը ցուցադրէր: Միջնաբերդին վրայ կար նաեւ խաչը որ կը գտնուէր գլխիւնայն մահիկին վրայ: Բարձրէն կոչուած տնն միջնաբերդը Չարերու փաղեմի կայանն էր:

Այս մրգական կերպարանքին վրայ՝ երեսակայութեամբ եւ փառքի ջերմ ըզգացումով մը սողաբուած՝ զինւորները միասին բուցականցէին: «Մօսկուա, Մօսկուա»: Անոնք որ բլուրին ստորոտը մնացած էին՝ փութացուցին իրենց վազ-

քը: Վայրկենի մը մէջ զինւորական բոլոր շարքերը շփոթելով՝ ուղեցին լարուած ուշադրութեամբ մը աւելի եւս զննել այս մեծ քաղաքը, ուր արկածախնդիր քայլ մը գիրենք տալիսը դառն էր: Աստեղմէ եւ ո՛չ մէկը կրցաւ յագենալ այնքան զգացումներ սփռնող այս ակնախաղ տեսարանէն: Նարդիւն իր կարգին վրայ հասաւ: Ան դէպի Գահիրէ, Մէմրիս, Յորդանան, Միլան, Վիէննա, Պեղին եւ Մատրիս յաջողորէն արշաւող իր ամենէն արեւոր զինւորներուն հետ, իր տեսածներովն ու ըրածներովը արբշիւ, չ'կրցաւ ինքզինքը խոր յազումէ մը պաշտպանել: Ինք հասաւ այսպէս իր մեծութեան դաժախտակէտին, որմէ վերջ այնքան շտապ քայլերով չ'դէպ ի անդունդը պիտի իջնար: Տեսակ մը գինավորութեան զգաց եւ մոռցաւ բոլոր այն մեղադրանքները, զորս աշխարհակաշնորու միակ խիղճը կը սղոյ ողջմտութիւնն իրեն կը մատուցանէր: Վայրկենի մը համար ինք տակաւին հաւատաց որ, Բարիզէն դէպ ի Միսիանաք, Միսիանաքէն դէպ ի Մօսկուա համարձակութեամբ արշաւելէն աւելի՝ մեծ ու երջանիկ յանդգնութիւն մըն էր այս, որ պատահարաւ արդարացաւ: Ապահով իր փառքին վրայ՝ դեռ հաւատաց իրեն երջանկութեան: Հետը սքանչուցած տեղակայները, ռազմադաշտին մէջ ունեցած իրենց յաճախակի զգոհութիւններն երբեք չ'յիշելով, իրեն համար գտաւ յաղթութեան այս կարծեցեալ խանդավառութիւնը, որով իսկապէս մղուած չէին մինչեւ Պառօտինոյի արիւնյալից օրուան վերջաւորութիւնը: Նարդիւնի կեանքին ամենախոր զգացման արտայայտութիւնն եւ զող գոհունակութեան այս կենդանի եւ կարճ վայրկեանը, սակայն, աւա՛ղ, կը պարտէր վերջինը ըլլալ:

Թարգմանեց

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԵՂՄՈՒՆԻ

ՄԵՐ ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՔԱՌԵԱԿ ԱԶԴԱԿՆԵՐԸ

(ՄԱՄՈՒԼ)

II

Մամուլը մարդկային հոգեկոնն նկարագրի հարազատ թարգմանն է: Եթէ կ'ուզես ազգի մը, ցեղի մը, դասակարգի մը նկարագրի մասին գաղափար ունենալ, մօտեցիր անոր գրականութեան ուր արտացոլացած պիտի գտնես փնտռածդ: Մարդկութիւն կոչուած առեղծուածը, չէ այլ բան, բայց եթէ, հոգեկան զանազան փիճակներով օժտուած մտայնութիւններու համագործութիւն մը: Այդ մտայնութիւնները ծնունդն են իրենց սեպհական սերունդներուն, ցեղերուն, ազգերուն, և գրականութիւնը չէ ուրիշ բան, բայց եթէ, այդ մտայնութիւնները լիովին պատկերացուած՝ թուղթի վրայ:

Մարդկութիւնը կազմուած ըլլալուն համար զանազան մտայնութիւններէ՝ արտուողում է բազմասեռ գրականութիւն: Մամուլը և Գրականութեան դերը, այդ բազմազան դասակարգերու մաքին զապանակը չ'ժամագոտեցնել տալուն և այդ հաւաքական մարմիններուն բազմամիջիօն աչքերը միակ կէտի մը - քաղաքակրթութեան վրայ կեդրոնացնել տալուն մէջ կը կայանայ: Մամուլը կոչումը անհատներուն գիտցնել է բարին, գեղեցիկը և ճշմարիտը: Այս սկզբունքին հակասող մամուլներ մարդկութեան զաւաճաններն են, առեւանգած ըլլալուն համար բարոյական նկարագրի մէկ մասը: Մարդկային նկարագիրը սրովհետեւ կ'ազդուի արտաքին աշխարհներէ, և այդ նշկերագիրը շինող ճարտարապետներէն մին ալ մամուլն է:

Հակառակ սակայն այս ճշմարտութեան, իրենց կոչումին զաւաճանող մամուլներ

պոկաւ չեն եղած, որոնք ծախելով իրենց տաղանդն ու գրիչը այս ու այն անհատին կամ դասակարգին, անհատական շահը հոնրային շահէն բարձր բռնելու չափ չափաւ եղած, կ'աշխատին ու կը ճըգնին անցեալի մեռեալ փիլիսոփայութիւնները հեղ մ'ալ մարդոց մտքին մէջ սողոսկեցնելու շունչ և կենդանութիւն տալ փափաքելով անոնց: Ասոնք են ամէնամեծ ոճրագործութիւնները: Համոզմամբ գործողներ մեղադրելի չեն երբէք: Կեղծողներն են վատերը և ստրուկները:

Եղած են անհատներ որոնք, նկատի առնելով անհատներու հոգւոյն վրայ մարտի ներգործութիւնը և այդ ներգործութեամբ առաջ գալիք ապագայ անպատեհութիւններու բազմակնճիւ թնճկութիւնները, յաւատեաներ չեն անոնց առջև գրական տապալիքները բաց թողնելու անասկէտէն: Բայց մենք այդ յաւատեաներէն չենք, այլ օրինական հողի վրայ կը սիրենք տեսնել մամուլը կատարեալ ազատութիւնը որը ամէն անհատի քաղաքացիական իրաւունքն է որով կախում ունին դեռ միւս մեր բոլոր իրաւունքները, ինչպէս Մատամ Տը Սթայէլ դիտել կուտայ: Գաղափարներու այդ ազատ մարտնչումներէն, արդէն պիտի իյնան այն բոլորը որոնք ժամանակի ոգւոյն անհամապատասխան են: Անոնք ստիպուած մահուան պիտի դատապարտեն իրենց գրիչները, որով միջնադարեան գաղափարները աստուածացնելով կը փափաքին անոր խորանին քուրմը դառնալ: Evolution ի անիւին արագ թաւալումին մղիչ ոյժը ստեղծող և առաջ բերող մատուլին պայծառացման մէկ

անուղղակի ազդեակներէն մին ալ այդ է: Թող գայ, անով մամուլը չ'արատաւորուիր ինչպէս արատաւորուած է Արեգակը, իսկաւակ որ իր մէջ սեւ թիւերի եւնի: Արեգակը իր այդ սեւ թիւերուն մէջ վսեմ է, նմանապէս մամուլն ալ ասանցմով պիտի բարձրանայ...

Այսքան ազատ եւ անկաշկանդ, պէտք է ճոտագայթէ մամուլը մեր գաւառներուն մէկ ծայրէն մինչեւ միւսը եւ իւրաքանչիւր իր գրական արշաւանքը կատարէ՝ անբռնադարեւիորէն: Մեր վերածննդ գաւառները, հանրային շահը մամուլայնորու շահէն բարձր նկատող սեփականեր պէտք է հաստատեն: Մենք չ'իրիւց գաւառական աղբաւր բանջող մէջ, սակայ թէ՛ գարգացման հետամուտ նոյն քաղցրիկ խոյկերու եւ թէ՛ յետադիմացիւն սեւ գրգռութիւններու կը հանդիպինք: Այդ մեզ գլխակ կատայ թէ, հոն, մեր քաղաքները, չ'առողիմութեան սատանին սրղեղիւնները քաղաքի մութեան զիջուհոյն չ'ընդամեններուն հետ կողք կողքի կայնած կը գործեն քաղաք: Ուրեմն մամուլը պատմական այս բաղկենրուն մէջ կապարկի մեծ ծառայութիւն մը ունի:

Այդ գերն է գրամուրտով արձատաշան ընել, մաքուր եւ անաչառ հողի վրայ կանդնող քաղաքացիական աստղը գրականութեանը, մեր գաւառներուն մէջ զոյ կողմ մահացողիչ զաղտութիւնները, զոյնք յոյն զնկով գաւառացիները փոքրիկ ուղեկներուն մէջ արմարներ եւ ծարձակած են: Պէտք է մարանջել գրգով միշտ: Այս Ապրիլ Համիլ, քսաներորդ դարու բռնապետներու այդ փարպիս գիւտնագետը չաւ լաւ հասկցած բոլորով, կը կաշկանդէր մամուլը զարմանեւ եւ ամէն կերպով աղքատ կը յաղաքանէր գաւառին մէկ խողջը նոր մամուլ մը հիմնելու ատեն: Նա վաղակամ ըլլալով գաւառացիին միտքը կրկնութեամբ ցանցապատերու էջ բռնիորէն տաղանդները կը շահագործէր իր անձնական շահուն ծաւալեցնելու տարով

եւ անոնց կոտորին ու խղճին նախապէս ճշմարտութիւնը կեղծելու սակարկով: Երեւնաւեայ Համիլիւն թէ՛ թիւ մամուլ կաշկանդման արդիւնքն է՝ այսօրուան գաւառական մատարականութեան անկեղծ վիճակը: Այդ կաշկանդումներն էին գարձակ որ այս հայրենիքը—գաւառական անուղղակի գրականութեամբ—կորստեան անամէջ անգուցին մինչեւ եղերքը հեղուցիւն: Սուկայն ուսնելով վերածննդի վերածննդութեամբ համար ալ ամէն նշոյններ ճիշդ տրւած է: Եւ վերածննդութեան այս գործին համար ալ, գաւառացին իր մամուլով եւ իր թերթիք աշխատութիւնները ունի:

Սահմանադրութեան հոգեւորմէն վերջ, գաւառը շարժեցաւ գրականութէն: Ողջունեցինք կարգ մը սարքերիւններ: Հոգ չէ թէ անոնք արժանիք մը ներկայացնող հանդիմանք չ'ընդունին, յուսական էր որ քննական մտքերու գոյն ապացուցանել թէ կոյ գաւառներու մէջ ողջունելու հասարակութիւն մը որ կ'ուզէ գործել եւ հրապարակ իջնել: Այդ շտաիրաւացիորէն տեսնուեցաւ մեր գաւառներուն մէջ, գաւառի սահմանադրական մամուլով: Թուրք բռնապետութեան, բաղնջամայ այսքան տարիներու ճնշումներէն վերջ, գաւառին մէջ պետեւ կեանքանի միտք, որը պատմական կրեւոր մըն էր որ ցուցաւ թմբկաբաշի կատաները:

Մենք գնահատելով մեր գաւառի մամուլին կրեւոր, իրեն աղջնախոտիւն արացոյց, չ'ախտի քաշտիւն ճաղկելու որ քննադատելի կաշկանքը եւս:

Էութիւն պարբերականներու ջանքով ինչ հանդիպեցանք: Ազգայնորէն հրատարակութիւնները, համախառնումն էին եւ զամբնականապէս զանազան տեսերու եւ հետեւ էին որոշ քաղաք մը: Մամուլի տական պարբերականներ կրեւոր չ'են եւ կաճէ: Ձեռք ողջունած գաւառ գրական ընկերաբանական, քաղաքացիական, հո-

գերանական, մանկավարժական, տնտեսագիտական եւն. եւն. պարբերականներ, որոնք բարձրագոյն արժանիք մը ներկայացնէին: Ընդհանրապէս համայնաբանական գետնի վրայ մշակուած գրականութիւն մէջ որ ողորկեց իրապարակը: —Արդ, մաքրագործում, կանոնաւորում այդ գրականութեան:

Որպէսզի անհատին միտքը կրթուի, գրականութիւնը պէտք է ճիւղաւորուի: Գրական ամէն սեռ պէտք է իր որոշ ուղղութեամբ հրապարակ գայ. և դասական գրականութիւնը պէտք է իտէալ դառնայ ամէն գրող անհատի համար: Այս կը պահանջէ մամուլի իրականացում: Թիւնը որմէ հետի է մեր գաւառական մամուլը: Երբ գրականութիւնը չհրաւորուած, զստակարգուած, ճիւղաւորուած իրապարակ կուգայ, այն ատեն է որ մամուլը բազմաշաղ աքեգակին պաշտօնը լիովին կատարած կ'ըլլայ, զրկելով իր ճառագայիները մտքին չափ մը մեղաւայ խաւերը: Այդ լուսաւորումով և ուղին գիտակցութեամբ, վերջուած պիտի լլլայ անձնական զծուծ կրքերու արդիւնք եղող ներգայ ոչ պատուաբեր գրամարար, որ կը թագուորէ մեր գաւառական մակուլին վառաւոր էջերուն մէջ: Հաւարակութիւնը դէպի բարին հետաքրքրող հասուածներ պէտք է յուլան լարաքանչւր պարբերականը էջերուն մէջ: Հերթը անպէտ զատարկացանութիւններու, պէտք է քաղաքակրթութեան ճամբուն վրայ քալել միշտ առաջ:

Այս ամբողջին զոպանակը, մամուլին տեսակէտով, կը խորհիմ թէ քաղաքացիական կուռ գրականութիւնը պիտի լլլայ: Մեր գաւառէն ներս, ժողովուրդը ըր ներկայ թմբութիւնէն սթափեցնելու համար՝ անհրաժեշտ է էն առաջ մշակութիւնը քաղաքացիական ու անտեսագիտական կենսատու գրականութեան: Այդ գրականութիւնն է որ պիտի երևան բերէ անհատական ու հանրային պարտաւորութիւններն և իրաւունքները: Եւ երբ անհատը, կը հասնի գիտակցութեան այդ բարձր աստիճանի, աղերսելէ աւելի կը պահանջէ, անա այդ ատեն է որ վերէն Աստուած, իսկ գերեզմանին խորէն կիւթէմպէրկ մարերան պիտի կանչեն մեր գաւառներէն ու ներս մեր սպասած քաղցրաքարառ «Եղիցի լոյս»ը...

Անա այդ ատեն մեր գաւառները վերածնուած են:

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

Ամա փա

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ՆՇԱԿԻ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՓԵԼԵԱՆԸ (1872 - 1912)

Խմբագրութեան հասած ծանուցագրէ մը կը տեղեկանանք թէ՛ 40 երկար տարիներ հայ գրականութեան ու մամուլաբար կալկառու հայ մատուցականութեան զօրեղացման ստորադր Գ. Արծըրունի հիմնած «Մշակ» ի քառասնամեայ յոբելեանը տեղի պիտի ունենայ եղեր, Թիֆլիզի մէջ, առաջիկայ Մայիս 26 ին: Յոբելեանին հպատակայարմար ու 40

տարիներու իրական ծառայութեան գնահատումըն վայել դիրք մը տալու համար 46 ծանօթ դէմքերէ յանձնախումբ մը կազմուած է:

Մեր սրտագին շնորհաւորութիւններն յայտնելով կը մաղթենք որ ըր դերին մէջ երկար տարիներ ևս շարունակելով շարք մը յոբելեաններու ո՛ր արժանանայ:

Յոբելեանի վերաբերեալ գրութիւններ ուղղել՝ Տիար Յովհաննէս Սպենդարեանին իսկ գրամներ ևայլ նուէրներ՝ Տիար Արշակ Մեկանին: ԽՄԲ. «ԱՄԱՍԻԱ»

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՅ ԱՆՈՒԱՆ

Պոլսական թերթերու մէջ կարդացինք թէ՛ Պուլկարիոյ Նախարարապետին հայ պետական բարձրաստիճան պաշտօնեաներուն՝ Եգիպտոսի փոսթատան կնիքը կրող գրքի ձեռով մէյմէկ ծրարիկներ ելեր են, որոնց վրայները ֆրանսերէն լեզուով «Հայոց Պատմութիւն» և «Նաղարէթեան» վերատառութիւնները գրուած են եղեր։ Դրքին ծառային համեմատութեամբ ունեցած խիստ թեթեւութիւնն ու բանալուզուելու պարագային դժուարութեան բաղախիլը կասկած ներշնչելուն, պէտք եղած քննութիւնները կատարուելով կ'ստուգուի թէ ատոնք «Հայոց Պատմութեան» գրքեր չեն, այլ ուժանակներ, խիստ խնամով ու վարպետութեամբ պատրաստուած։

Կը կարծուի թէ Սկրանիկի մէջ գործող գաղտնի կոմիտէի մը գործն է, բայց այդ պարագան մեզի չի հետաքրքրեր։ Դժայն կ'ուզենք գիտնալ թէ ո՞ր ճշտող ձեռքն է որ իր նպատակը յառաջ տանելու համար իայութեան անունը կը շանդործէ և արդէն իսկ, անոր՝ Նանգիստ չուսնեցող կեանքը անգամ մ'ևս փոթորկելուն պատճառ դառնալ կ'ուզէ։ Սա՛րստարձակ անխղճութիւն է և բարոյական անկում։

Պահ մը հանդարտ թող ձգեն խեղճ ժողովուրդը, որ քչիկ մը ինքզինքը գտնէ։ Հայութիւնն ինչ գործ ունի Պուլկարին նկատ։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ժամանում.—

Վիճակիս Ս. Առաջնորդը Տ. Գէորգ Ծ. վրդ. Իրաւնոսեան որ Մարգուան մեկնած էր տեղւոյն թաղ. խորհրդոյ ընտրութիւններուն վրայ նկելու համար, անցեալ չաբթու տեղս ժամանեց։ Բարի գալուստ կը մաղթեմք։

ԼՍԱՐԱՆՆԵՐ

Դաշնակցական բեմ.—

Ապրիլ 21 թ Ն. Յ. Դաշնակցութեան բեմէն կրկին Տօք. Բարունակ Բարսեղեան երեւելի և անբերեղոյ փաստերով հարուա-

ծեց Հնչակեան կուսակցութիւնն և փառարանեց Ն. Յ. Դաշնակցութիւնը։

Հնչակեան Բեմ

Ապրիլ 29 թ Ս. Դ. Հնչակեան Գլխավին մէջ «Մեր քաղաքական հասկացութիւնն ու օրուան խնդիրներ» նիւթին վրայ՝ գեղեցկօրէն բառախօսեց Տիար Գ. Աթէշեան, ան թուեց թէ ինչ եղած է մեր երկրին զեկավարներու նախկին և ներկայ քաղաքական հասկացութիւնը։ Ներկայիս մէջ երկրին սպառնացող խնդիրներու հանդէպ, այդ քաղաքականութեան վերատարածութիւնը թուելով, ազդարարական ըմբռնութիւն վերացման, ներքին և արտաքին խաղաղութեան անհրաժեշտութիւնը շեշտեց և կոչ ըրաւ քաղաքացիներու որ օրինական հողի վրայ կանգնած պաշարին սղգանակաւնութեան դէմ և ժողովրդային միանեծանութեան հանդէպ գրուած հարուածներու։

Բառախօսութիւնէն յետոյ Տիարը Ն. Թապիպիան և Մ. Իփէքճեան, անցեալ չաբթու Դաշնակցութեան բեմէն Տօքթոր Բարունակի ըրած կարգ մը լիբերալներն ու պատմական անձնութիւնները ճշտեցին։ Յետոյ կարդացուեցաւ Տիար Նշան Էվրանեանի ունեցողներու ուղղած մէկ բացատրագիրը, որ Տիար Նշան Էվրանեան իր խոստման և Տօք. Բարունակին փափաքին վրայ, ի պարզէր ժողովրդեան Տօք. Բարունակին բանապետական չըլնալի մէջ ունեցած յեղափոխական գործունէութիւնն... և նիւթական խնդիրին մէջ ունեցած պատասխանատուութիւնը։ Այդ գրութենէն որոշ կերպով կերեւէր թէ՛ Տօք. Բարունակի աներջ թնոս Տէօվլէթեանը, իւրաքանչեւ Հնչ. կուսակցութեան, 250 լիրայի մօտ գրամին պատու խանատուութեան զօրաւոր բաժինը կը ծանրանար Տօք. ին վզին. քանիոր ինքն է եղեր այն տանտուան գրողիւրը և հաշուետեսին անհետացնող և կամ անհետացման դրդապատճառը եղողը։ Տիար Նշան Էվրանեան Տօք. ի մօտին երկու կարեւոր լուսարանութիւններ ալ՝ յարմար առթիւսս կը խոստանար։

Արտօնատէր՝ ՀԱՅԿԱՍՏԻՆ ԹԱՊԻՔԵՍՆ

Խմբագրական՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏՈՒՄԵԱՆ

بلدیہ ہیئتک نظر دقتہ

منابع مختلفہدن نبعان ایدوب شہرمزہ جریان
ایدن صولرک یوللرینک غیر منتظم اولسی و بونک
دوامی صحت عمومیہی اخلاص ایدوب بر طبق
خستہ لقلر تولید ایدہ جکی کچلردہ دوقشورلرمز
طرفندن کشف و مقام عائینہ بیان کیفیت ایدلہ
یکی استخبار قلنمش ایسہدہ شمدی بہ قدر هیچ
بر نتیجہ حاصل اولماشدر. صحت عمومیہ حیات
نقطہ نظرندن اک مهم بر مسئلہ در دبلسہ مبالغہ
ایتمش اولمیز. چونکہ حیات صحتلہ قائم و صحتہ
تمیز لکک: ولایات متجاورہدہ قولرا علت وخیمہ
سنک حکمفرما اولدیسی تأسفلہ استخبار ایدلہ
ایشتہ نفاقتہ عدم رعایتک نتیجہسی چونکہ خستہ
لقلرک دہا طوغریسی بوکی علل ساریہنک اکثریا
تمیز اولمیان محلردہ حکمفرما اولہ جی جملہنک
قبول ایدہ جکی بر حقیقتدر.

بناء علیہ مملکتمز. بلدیہ ہیئتندن برچوق خد
متر بکلور ایسہدہ بکلمکدہ اولدنی خدمتدردن
اک برنجیسی تنظیماتہ صوک درجہ دقت بیورملری
اولسہ کرکدر. هیچ اولمزسہ مملکتک آئینسہ مر
حہ باری اولسون سالف الذکر صو یوللرینک
انتظامی و چارشو بازار و زقاقلرینک تمیز صا
قلنمیلہ اہالی لادنک ہر درلو علل وامراضدن
سالم طوتلمسی اسبابنک استکمالی خصوصندہ
منفعت عمومیہ نامنہ بلدیہ ہیئت محترمہ سنک نظر
دقتی جلب ایلرز.

اماسیہ

لرندہ کمال احترام ورعایتلہ ترک طور وحرکتلہ
الریدہ غرض سال (کیم بیلیر دروندہ نہ کی بارہ
لرہ چارہ ارانیلیور) اولہ قلمری حالہ باشلری
کوسترن شو وطنک اک غیور فقط پک حقیر اک
معقول فقط پک مفدور قہرمانلری بر سرد
معاملہ و نابجا کلمہ لرلہ طرد و تبعید ایلدیکاری
مشاہدہ اولمقدہدر

حقیقہ وطنمزدہ اک زیادہ مظلوم و مفدور
آرازیدرسہ اودہ کویلیلمزدر وطن انلرک سعی
و غیرتلرندن پک چوق استفادہ ایدرک بر
جزئیاتی انلرک تعلیم و تربیہ لرینہ صرف ایتہیور
وطن انلرک قہرمان عساکری خارجی دشمنلرہ
سوق ایدیورکن بر لوکی اولسون جبراً و بی غیر
حق اموائی ینماء اراضینی غصب، عرض و نا
موسی پای مال ایدن جالی بکارینہ اشقیاء و اشراء
اوزرلرینہ سوق ایتکدن ممانعت ایدیور:

ایکجی جلسہ دوریہ سنک کشتیہ مشرف
اولدیغمز مجلس مبعوثانمزدن وطنک تعالیسی و
حسن معاشرتک ادامہسی خصوصندہ مفید قا
نونلر انتظار ایلدیگمز کی زوالی کویلیلمزک
دخی رفاه حال و سعادت لرینہ و وطنمزک حیات
اقتصادیہ سنہ چارہ یکانہ اولان زراعت قونونلری
وفن مذکورک احول جدید اوزرہ سریع خطوہ
لرلہ ترقیسنہ پادی اولہ حق وسائطک استکمالی
و معارفک ممالک عثمانیہنک ہر گوشہ لریدہ انتشا
رینہ ہمتلری اوزو ایلدیگمز کی کویلیلمزک
اطفالنک تعلیم و تربیہ لرینہ و معارفک اورالردہ
دخی کسب قوت الہیہی خاصہ و تضروعا ارزو
ایلرز.

اماسیہ عکس نظر فصایانہ

کویلیر

تدئیسنه و کویلیرمژك سفالته بادی اولیوردیك
در . بناء علیه خزینه دولت دخی عظیم براراد-
دن محروم قالیوز .

تعلیم و تربیه خصوصنه کلندکده کاملاً یوز
اوستی برافلمشدر . بوکون حکومت معارف
وبرکوسنك قسم کلیسی کویلیرمژدن تحصیل
ایدوب قصبه و شهرلیر اولادلرینك تعلیم و تربیه
سنه صرف ایتمکده اولوب بر مرکز قریه ده و یاده
ناحیه ده اولسون بر تك بر مکتب ابتدائی کشا
دنی خطرندن بیه کچیرمه مش و کچیرمیور دخی
اشته مساوات ... کیم حکم ایتمز که انلردن مد-
حتلر، کالر، فطنتلر، ناجیلر چیقمییه جک و صاغلام
فکر صاغلام بدیده موجود دره عجبا هنکی بر
شهرلی چوجوغی کویلی چوجقلری قدر قوی
البنیه در جهت عسکریه کلندکده میدان حربیه
عجبا بموشاق قوش توی دوشکده راحت ایدوب
لذیذ و نفیس طعاملر بیسه رك زیتلی روبالز لابس
اولان بر شهرلی عسکریمی فضلجه ابراز مهارت
و میانت ایلر؟ یوقسه قوری طوبراقلرده یتیان
موسم شانك قاروبوزینه کوکوس و یرن طبیعتك
احسانی براق صو و باق هواسنی نفس ایدن بر
کویلی عسکریمی؟ شو احوال حقیقه میتر شمس
کبی میدانده ایکن حکومت حاضره من شو درت
سنه ظرفنده زواللی قهرمانلر مژك حال بر لالریه
رفاه و سعادتلرینه بر چاره حسنه دوشنه مدیکی
کبی بعض حیتلی و احل وجدان وطنپرور ما-
مورلر من دخی! عدلیه ملکیه و عسکریه قیوپ

الکامرک امور تجاریه و حیات اقتصادیسنی
توسع ایدن فن زراعت اولوب انك دخی صورت
ترقیسی رنجبر کویلیرمژك ید تصرفنه برافلمشدر
ر ملتك قوه اقتصادیسنی تشکیل ایدن زراعت
ایدوکی معلوم عامه در . بو ایسه مملکت مزده سنبن
وفیره دنبرونه اصولده ایسه عین صورته دوام
ایتمکده در . بوکون اورویاتك مطمح انظار
صرف فن زراعتده منجر اولمشدر . بز ایسه
اعلان مشروطیتدن بروغنه ستونلرند مقاله لر تحریر
وطریقلر اراء اولمشده مع التأسف بیان اولنور
که یازیلانلرک حکمی انجق و انجق اوقونوب
ثمره سز اوله رق بر گوشه اتر و اودده برافلمشدر .
ارشاد اولسان طریقلرک بر تك بر یسنه اولسون
مرکز اداره من صرف ذهن ایدمه مدیکی کبی کویلی
چاریقلی قهرمانلر مژك یارملری پك یاقندن مشا-
هده ایدن مرکز ولایات من دخی بر کونا اشغال
فکر و هیچ اولمازسه چاره ابتدائیه لرینه ابدار
و توسل ایلمه مشدر ، زواللی کویلیر من اجداد
دندن کورمش اولدیی اصول عتیق اوزره حرث
و زرع ایدوب جناب بارینك عنایتنه و طبیعتك
حکمتنه برافرق وقت حصادره هر نه اله کچرسه
انکله اکتفا ایدر .

بوکون بغداد ولایت داخلنده ، موش و وان
اوالرند ، سیواس و انقره ایالاتنده منبت ترلار
اراضی خالیه ، جسیم اورمانلر مرغی و عرصه لر
اولوب یونلرک اعمار و عمرانه الان بوکون ر
و جهله تشبثانده بولنلمش ، بو ایسه زراعتك

ایستون . یاخود اتصالنده بولنان الات زراعیه نمونه خانه سننده کی الات و ادوات حقننده بر شی
صورسونده بر تعریف و برمه که فرصتی اوسون . افندی مومی الیه چند دفعه لری یکی صابانلرک فعلاً
تجربه سی کوسترمش اولدینی حالده الان رغبت ایدنلرک بک اهمیتسز بر صابی تشکیل ایتکده اولدینی
کان ناسفله سویلیور . درعهده ایلدیکی وظیفه بی اجرا ایتکه هر دقیقه حاضر اولان بر مأمور
کیدی فتنه . معلوماتنه ، تعریفانه ، تلقینانه و نصیحتنه محتاج اولان بیکرجه اهالینک دائره سی اوکندن
بلا بروا کچدیکی کورر ایسه آرتق سز مأمور مومی الیه ک قلمنده حاصل اولان یأس و قنوری
خیال ایلک .

کذلک ایلدی به بیطر مأموری افندی متباداً عینی محله بولندینی حالده امور رسمیه به باقیقندن
بشق بر شی یاه میور . تقدیر ایلدیور ، بالاده تعداد ایدیلان مأمورینک هپسی ده وظیفه لری
هر ان نموناً اجرا به حاضر اوله جق قدر وظیفه شناسلغه مالک اولدقلمینه امینم . انجق بزم رنجبر-
لرمز عظامی تنبللکی ترک ایده میور .

بفجوان برادر ! الما آغاجکی طبرطیردن قورنارمق و سکا هر آغاجدن یوز غروشلق الما اله-
بیامک اصولی اوکرمک وظیفه سیله مکلف اولان مأمور وار . بونلر سنک قازداشلر کدر سنک ایلکال
تراکنله کوریشورلر . هر سؤاللریکه جواب اعطا ایدرلر سکا بول کوسترلر . یازیق سکا . بونلرک یاننه کیت
اوکرن فقیرلکدن یاقایی قورنار . آرتق او یان . غفلت اویقوسندن قالق . نجالش و زنکین اول .
آرتق بخت و اقباله استناداً یا شامقلمک زمانی کچدی . ددولرمزک وقتنده المامز وار ایدی فقط طیر-
طیر یوق ایدی . باغلرمزده صاک بولمیز ایدی . کیرازلرمز قوردلانز و سبز و واتمز کربیلنمز ایدی .
شمدی عالم دکشیدی انساندهده خسته لک چوغالیدی نباتاندهده فقط جناب حق درمانسز درد ویرمز .
ایشته نباتات و حیوانانکده بولنان دردلرک درمانلری بیلن مأمورلری حکومت سکا کوندرمش
اگرچه استفاده ایتز ایسه ک مسئول سنسک . قطعاً قانع اول که بونیکده کی کهله بی و یاناغکده کی
پیره بی تمیزلکی نصل وظیفه صایار ایسه ک اویلهده باغکده کی طبرطیری اولدرمه ک مجبورسک اگرچه نصل
اولدرمک ایجاب ایتدیکی بیلمیور ایسه ک ایشته مأمور افندیلر ، مراجعت ایت و مشکلی حل ایله .
ماویفوسمز بر اهالی بی اداره ایتک مجبوریتیده بولنان حکومت دنیانک الک منتظم حکومتی ده
اولسه ینه بر نمره کوسترمز ، بزم کی یوزده سکسانی رنجبرلردن مرتب اولان بر ملت اسکرحه
حکومتک از جوق ترتب ایلدیکی سهولتدن استفاده ایده مز ایسه چوق یرلرده رنجبر زمهره سنک
بوزینه آیلان جاهلک صفتنه بحق شایان اولمش اولور .

ا. ق.

امانتیه

طشره منادیس

برنجی سنه

۳۰ نisan سنه ۳۶۸

نومرو ۱۴

رنجبرلرمزه

هر کسک اینانسی لازم کلان بر حقیقت «نه اکر سک اونی بیچرسک» ضرب مثلی در فقط هر حقیقت کی بو دخی لایق وجهله تقدیر ایدیور . نه عالم مادیانده ونه ده عالم مغنویانده بونک اهمیتی اکلاشلمیور . مثلاً بر رنجبر بو حقیقتی بیله یکی حالده کوتی تخمدن ایی محصول الملق ارزو ایدیور و بر عمله آیده بش کون چالیشهرق اوتوز کون یاشامق فکرنده بولنیور .

دیبلوماتلق آقیندیسنه قایلان بر صنف اهالیز هر شیئی حکومندن بکله مک علتنه دوچار اولمش ، بو صفده بولنان رنجبرلرمزه اوله آرزو ایدیور که حکومت زراعت ایچون هر فداکارلی درعهده ایتسون ، پاره اقراض ایتسون ، الات جدیده تدارک ایتسون ، بونلری اهالی به مجاناً توزیع ایتسون ، قوللانق اصولی اوکرتسون و دهانهلر . بک اعلا ، حکومت حاضرءنک بویه بر غائبهلی زمانده بیله رنجبرلرمزه طوغری اولان وظیفه سنی اجرا ایتمکده اولوب اولمیدیقی تحقیق و تجسس ایدلم .

بکن نسخه ده اولان بندهده دخی ذکر ایلدیکم وجهله حکومت مصارفه دوچار اولهرق اماسیه اهالیسنک طلبی اوزربنه بوجکجیلک مکتبی آچدی . مجاناً طلبه قبول ایدیور . نرهده رغبت ایدن؟ نه ایچون بفتحوان اولادینی کوندرمیور ؟ بو مکتبک شمدی نه سیدن یوز طلبه سی یوقدر ؟ مکتب مذکورک شمدیکی مدیری فنک ترقیسی ایچون هر فداکارلی اجرایه حاضر مقتدر متقن بر ذات در ، عجباً شمدیه قدر قاج بوجکجی کندیس ایله بوجک صقلامانک یکی اصولی ایچون مداوله افکار ایلدی . اوله ظن ایدرم که افندی مومی الیه کندیسنه کرک بوجکجیلک و کرک فن زراعتک دیگر شعبه لری حقنده استفسار معلومات ایلانلری هر وقت نمون ایتسکه حاضر در .

سناغمز زراعت معلمی افندی دائره مخصوصه سنده صباحدن اقشامه قدر بکلور که بر رنجبر ، بر بفتحوان ، یاخود بر اهل مراق قبوسندن لطفاً ایجری کیرسون ده کندیسندن بر معلومات

Փ. ՀԱՅՔԻ ԱԶԳ. ՊԱՇՏ. ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ.

Այն բոլոր Ազգ. պատժական մարմիններն որ մեր անցեալ 13րդ. քիւի խմբագրականը կարգալէ յետոյ կ'ուզեն մեր միջոցաւ Տեսուչներ, Տեսչուհիներ. Ուսուցիչներ, Ուսուցչուհիներ ու Մանկապարտիզպանուհիներ հայ-բայթել. թող բարեհաճին զրել մեզի թ'ե:

1.— Ի՞նչ տեսակ պատժանայ կ'ուզեն, ի՞նչ գործի եւ ի՞նչ նիւղերու համար:

2.— Ի՞նչ պարտանքներ ունին: Եւ այլն:
ՈՒՍՄԻՅՉՈՒԹԵԱՆ.—

Խոյնալի բոլոր այն՝ Տեսուչներն ու Տեսչուհիները, Ուսուցիչներն ու Ուսուցչուհիներն ու Մանկապարտիզպանուհիները մեր ներկայ խմբագրականը կարգալէ յետոյ մեր միջոցաւ պատժոյ ձեռք բերել ուզողներ թող բարեհաճին զրել մեզ՝

1.— Բնիկ որ տեղացի էն, ո՞ր դպրոցէն շնորհաւարս են. քանի՞ տարի է ի՞նչ պատժոյ կը վարեն եւ որ տեղերու մէջ, ի՞նչ նիւղերու համար նախատրուքներ ունին:

2.— Բարեւոյ պատժանաւարութեան ու ուսուցչութեան վկայական ունի՞ն:

3.— Ո՞ր տեղերու մէջ կ'ուզեն պատժանաւարել. ի՞նչ տեսակ պատժանքներ. եւ ի՞նչ պայմաններով: Այժմ ո՞ր կը գտնուին.

—ԽՄԲ.—

Ծ. Խ.— Ինչպէս խմբագրականին մէջ ա՛յլ բաժանու է Փ. Հայկի շնորհակալէն դուրս ա՛յլ եղած դիմումներուն գեղացում սալ ալիսի ջանաւն:

ՍՏԱՅՈՒԱՇ ԳԻՐԻՔ.—

«ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՊԱՅԲԱՐ» — 72 մե-

ծագիր եղերու մէջ կը բացատրուին Սոցեալ-Տեմոկրատիայի եւ սոցիալական դատարանութեան՝ զիտուութեան սկզբունքներու հիմնական տարբերութիւնները. Աւելի հոգալից հարցի նկատմամբ ալ հակիրճ բայց մոզի՛ Տեսուչին մը:

Հեղինակ — Սոկրատեան Գեօժեանց — Գրեւ — 3 դր. դիմել՝ հրատ. — Հմ. Արամեանցի — 4. Պոլիս — փոսթարկի քիւ 125


ՀԱՅՈՒՆ ԵՒ ԳԱՐԱՆԸ — Գեղարուստա-կան աննայսրնրաց պատկերազարդ երգարան մը՝ ուր կը գտնուին մեծամասնութեամբ Չախագրուած հայուն հին եւ նոր երգերը տառնայ կոտակցական խտրութեան. Ամեն գնահատուած լաւագոյն է հայուն երգարանը:

Դիմել հրատարակչին՝ Տեառ Հմ. Արամեանցի — 4. Պոլիս փոսթարկի քիւ 125

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

ԱՄԱՍԻԱ



Ոսկի գործն եւ պրիճ նաեւ տեղի- շոյս արհեստական ասամներ շինելու վաճառական մեքոսը սորվիլ ուզող բոլոր ասամաւարայտներու կը յայտարարէ թէ ինք պատրաստ է այդ մեքոսը սորվեցնել նպատաստը պայմաններով:

سیفورطه جی

سیمون فارقیان

آماسیه

آلیانسه عمر سفورطه سی لانتاشه حریه

سیفورطه قوه پانیه لرینک اجنتی در.

مناسب شرائطه هر نوع سیغه، ترمه، بشری

بابار. آرزو ایدنلر. بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین افا دکانتک اتصلیده باتاقی

۵۰ (الی) پارویه معدن کوری صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈՒԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅԿԱԶԵԱՆ

ԶԻՆԱ. Կ. Ս. ՃՍ. Ռ. Ա. ՆՈՑԸ

ԲԱ.ԼԸԳ. ԱՇԸ — ՍՍ.ՄՄԻՆ

Կը վաճառէ ամեն կարգի ու ամեն տեսակ փամփուռ 0 | 25 զեղջուլ: Թող գիտեն, բոլոր առիթէն օգտուիլ զիջողները վստահ ըլլալով թէ իրենց շահը նկատի առի առնուի միտ: Օճ փորձեցե՛ք եւ համոզուեցե՛ք:

